— Այդ բոլորը մեր այգիից է, — ասաց պառաւը անմեղ պարծենկոտութեամբ: Միւս կողմում, զանազան փոքրիկ թակոյկների (տուճիկ) մէջ կարգով դրած էին իւղ, պանիր, մեղր, աղ դրած տառեխ եւ զանազան տեսակ թթուներ խաղողից, բոխիից եւ պէս-պէս մրգերից ու բանջարեղէններից: Ես առաջին անգամ տեսնում էի այսպիսի լիութիւն:

— Այդ բոլորը ո՞վ պիտի ուտէ, — հարցրի ես զարմանալով:

Մենք էլ կուտենք, ուրիշներն էլ կուտեն, — պատասխանեց պառաւը բարեսիրտ ծիծաղով: -Աստուած խօ բոլորը միայն մեզ չէ տոել. նա տոել է, որ մենք էլ չունեցողների համար բաժին հանենք:

— Գնէ՞լ էք այդ ամէնը:

— Ոչինչ չենք գնել: Բոլորը մեր տանիցն է. իւղը, պանիրը ստացել ենք մեր կովերից ու ոչխարներից, մեղրը մեր մեղուներից, միւսները նոյնպէս մեր բերքերից ենք ստացել: Պատահում է, որ երբեմն քրդերը մեզ համար իւղ, պանիր, չորաթան ընծայ են բերում, բայց մենք նրանց բերածը չենք ուտում, տալիս ենք վաճառելու:

Ես իսկոյն յիշեցի, որ այդ սովորութիւնը Պարսկաստանի հայոց մէջ էլ կար, մանաւանդ կանանց մէջ, որ «թրքազէն» է ասելով, մահմեդականների թէ՛ մորթած միսը եւ թէ՛ այլ ուտեստները պիղծ կը համարէին եւ չէին գործածի, ինչպէս, փոխադարձապէս, մահմեդականները հայերի պատրաստած ուտեստների վերաբերութեամբ նոյն կարծիքն ունէին:

Յետոյ մտանք ամբարը, որ մի ցամաք շինուածք էր, եւ ամէն կողմից օդը համարձակ անցուդարձ էր անում: Այստեղ ահագին, քառանկիւնի փեթակները լի էին ցորենով եւ ալիւրով: Մեծ եւ փոքր խարարների ու ջուալների մէջ դրած էին զանազան տեսակ ընդեղէններ՝ բրինձ, ձաւար, կորկոտ, մաշ, բակլայ, սիսեռ, ոսպ եւ այլն: Դրանք պահոց օրերի համար էին:

— Բացի բրինձից, — ասաց պառաւը, — մնացած բոլորը մեր մշակութիւններից ենք ստացել: Բրինձի մշակութիւնը այստեղ չի յաջողւում, եւ այնքան էլ ջուր չկայ. ասում են, որ նա ջուր շատ է սիրում:

Պառաւը երկրագործութիւնից նոյնպէս տեղեկութիւն ունէր:

Յետոյ անցանք թոնրատունը: Այստեղ հաց էին թխում, կերակուրներ էին եփում: Աղախինների եւ սպասաւորների մի ամբողջ խումբ աշխատում էր, կարծես մի մեծ բանակ պէտք է կերակրէին: Բոլորի վրայ հսկում էր, բոլորին կառավարում էր վարպետի կինը: Ես զարմանում էի, թէ ինչպէս նրա պառաւ սկեսուրը իր իրաւունքները տոել էր նրան: Մեր կողմերում այս տեսակ առանձնաշնորհութիւններ խիստ հազիւ էին պատահում ընտանիքնե-